ԵՐՐ ՁՈՒՂԱՔ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԺԳ ՏԱՐԻ, ԹԻՒ 109, ՅՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ 2015

«ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԻԱՄՆՈՒԹԻՒՆ» ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՕՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

«Մանուկ եւ տեւական խաղաղութիւն» հաստատութեան նախաձեռնութեամբ եւ Թեմիս Թեմական Խորհրդի համագործակցութեամբ «Մանուկ, խաղաղութիւն եւ միասնութիւն» կարգախօսով մանկա-պատանեկան միջազգային փառատօնի բացումը տեղի ունեցաւ երեքշաբթի՝ 2015 թւականի օգոստոսի 18-ի առաւօտեան ժամը 9:30-ին, Նոր Ջուղայի Հայոց ազգային կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում:

Հայաստանից եւ Իրանի Ահւազ եւ Սպահան քաղաքներից հրաւիրուած միաստուածեան կրօնքներին դաւանող աւելի քան հարիւր երեխաների եւ պատանիների մասնակցութեամբ տեղի ունեցած բացման արարողութեանը ներկայ էին Սպահան քաղաքի ընդհանուր քաղաքապետ դկտ. Մեհդի Ջամալիեեժադը, Մշակոյթի եւ իսլամական առաջնորդութեան գերատեսչութեան գլխաւոր տնօրէն հոջ. դկտ. Առզանին, Ազգային առաջնորդարանի պատասխանատուները, միաստուածեան կրօնքների ղեկավարներն ու ներկայացուցիչները եւ պետական հրաւիրեալներ:

Ծրագիրն սկիզբ առաւ աղօթքով, որին յաջորդեց Իրանի Իսլ. Հանրապետութեան պետական դրօշի ծածանումն ու հիմնի հնչումը:

Ծրագրի ընթացքում դասախօսութիւններով հանդէս եկան քաղաքապետ դկտ. Մեհդի Ջամալիեեժադը եւ դկտ. Առզանին, ովքեր շեշտեցին մանուկ-պատանիների դերն ու արժէքը՝ երաշխաւորուած, կայուն, ինչպէս նաեւ խաղաղ գոյակցութեան եւ փոխ-գործակցութեան հիման վրայ ապագայ կերտելու ուղղութեամբ, միաժամանակ մարդկային հասարկութեան այս նուրբ ու խոցելի խաւի առողջ աճն ու զարգացումը համարեցին ծնողների, դաստիարակների եւ պատասխանատուների կարեւորագոյն պարտականութիւններից մէկը:

Յաջորդիւ միաստուածեան կրօնների պատանի ներկայացուցիչների կողմից իրենց մայրենի լեզուով ընթերցուեցին եւ թարգմանուեցին իւրաքանչիւր կրօնի Սուրբ Գրքից հատուածներ՝ խաղաղութեան, համակեցութեան եւ գեղեցիկ աշխարհ կառուցելու կապակցութեամբ:

Ելոյթների շարքն աւարտուեց Սպահանի հայոց թեմի թեմական առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանի պատգամով, որն ընթերցեց Թեմական խորհրդի ատենապետ պրն. Վրէժ Տէր Մարտիրոսեանը: Թեմական առաջնորդն իր ուղերձում շեշտելով նոր սերնդի առողջ դաստիարակութեան կարեւորութիւնը, կոչ էր ուղղել բոլորին գուրգուրել մանուկներին ու պաշտպանել նրանց իրաւունքները: Գերշ. Սրբազան Հայրը խօսելով խաղաղութեան մասին, ընդգծել էր, որ Իրանը մշտապէս եղել է խաղաղութեան կողմնակից ու պատշգան, եւ որ այդ կեցուածքը պէտք է օրինակ ծառայի ամբողջ աշխարհին:

Փառատօնի բացման արարողութիւնն ուղեկցուեց դպրոցի բակում խաղաղութեան աղաւնիներ թռցնելով, որից յետոյ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

Հիւրասիրութիւնից անմիջապէս յետոյ, Հայոց դպրոցի սրահում եւ դասարաններում սկսուեցին փառատօնի

աշխատանքային բաժինները:

Մասնակից մանուկ-պատանիները խմբերի բաժանուած, պատասխանատուների եւ ուղեցոյցների առաջնորդութեամբ սկսեցին եռօրեայ իրենց աշխատանքը՝ ստեղծելու մանուկ, խաղաղութիւն եւ միասնութիւն թեմաներով գործեր, որոնք փառատօնի աւարտին ներկայացուցին հանրութեանը՝ ցուցահանդէսի միջոցով:

Փառատօնի ընթացքում մասնակիցները զբաղուեցին նկարչութեամբ, դիմակի պատրաստմամբ, ժողովրդական-տեղական խաղերով, քոլաժով, պատմասացութեամբ, թատրոնով, երգով, գրքերի պատրաստմամբ եւ արուեստի այլ տեսակներով:

Փառատօնն իր աշխատանքն աւարտեց հինգշաբթի՝ 2015 թւականի օգոստոսի 20-ի միջօրէին, Նոր Ջուղայի Հայոց ազգային կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում:

Ծրագրին ներկայ էին Մշակոյթի եւ իսլամական առաջնորդութեան Սպահանի գերատեսչութեան գլխաւոր տնօրէն հոջ. դկտ. Առզանին եւ նոյն հաստատութեան կրօնական փոքրամասնութիւնների բաժնի տնօրէն պրն. Թաբաթաբային, Իրանի իսլ. խորհրդարանում Սպահանի պատգամաւոր դկտ. Քամռանը, Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի ատենապետ պրն. Վրէժ Տէր-Մարտիրոսեանը, քահանայ հայրեր, Ազգային առաջնորդարանի պատասխանատուներ եւ պետական մի շարք հրաւիրեալներ:

Փառատօնի փակման արարողութեան ընթացքում, մասնակից մանուկ-պատանիները, խմբերի բաժանուած, ներկայացրին անցնող երկու օրերի ընթացքում փորձած, երբեմն իրենց հեղինակած երաժշտութեան, երգի, բանաստեղծութեան, թատրոնի եւ գեղարուեստական այլ ոլորտներին պատկանող աշխատանքները, որոնք մասնակից կրօնների մէկական ներկայացուցիչներից բաղկացած իրաւարար կազմի կողմից բոլորն էլ գնահատուեցին շատ լաւ:

Ընթացքում Հոջ. դկտ. Առզանիի, դկտ. Քամռանի եւ «Սաբեին Մանդայի» (Յովհաննէս Մկրտչի հետեւորդներ) կրօնական համայնքի ղեկավար պրն. Զոհէյլիի միջոցով յուշանուէրներ շնորհուեցին փառատօնի կազմակերպիչներին, պատասխանատուներին, ուսուցիչներին եւ համագործակցած կազմերի պատասխանատուներին, որից յետոյ պրն. Ռուբէն Խաչիկ-Գրիգորեանի միջոցով ընթերցուեց փառատօնի հռչակագիր-յայտարարութիւնը:

Փակման ծրագրից յետոյ, ներկաներն այցելեցին փառատօնի մասնակիցների ձեռքի աշխատանքներից պատրաստուած ցուցահանդէսը:

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՈՒԽՏԱՒՈՐՆԵՐԸ ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ ՄԻՒՌՈՆՕՐՀՆԷՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆԸ

Սպահանի հայոց թեմի թեմական առաջնորդ՝ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանի հովանաւորութեամբ եւ թեմիս Կրօնական խորհրդի նախաձեռնութեամբ, թւով 51 ուխտաւորներ Նոր Ջուղայից եւ Թեհրանից, 2015 թւականի յուլիսի 17-ին մեկնեցին Լիբանան՝ մասնակցելու Սրբալոյս Միւռոնի օրհնութեան արարողութեանը՝ նուիրուած Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին:

Իբրեւ պատասխանատու ուխտաւորներին առաջնորդում էր Շահինշահրի հոգեւոր հովիւ՝ Հոգեշնորհ Տ. Անանիա վրդ. Գուճանեանը:

Միւռոնօրհնէքին մասնակցելուց բացի, ուխտաւորների համար առիթ ստեղծուեց այցելելու Լիբանանի տեսարժան վայրեր եւ ուխտատեղիներ:

Համաձայն ծրագրի, խումբը շաբաթ՝ յուլիսի 18-ի երեկոյեան մասնակցեց Սրբալոյս Միւռոնի օրհնութեան արարողութեանը: Յատկանշական է սոյն արարողութեան կնքահայրն էր թեմի Պատգամաւորական ժողովի դիւանի ատենապետ՝ Վարուժ Մինասեանը:

Յաջորդ առաւօտեան ուխտաւորները մասնակից դարձան Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի նախագահութեամբ Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարում մատուցուած Ս. եւ Անմահ Պատարագին, նոր օրհնուած Սրբալոյս Միւռոնով կատարուած ջրօրհնէքի արարողութեանը եւ վերջապէս քրիստոնեայ բոլոր հոգեւոր պետերի եւ եկեղեցական ներկայացուցիչների մասնակցութեամբ տեղի ունեցած միջ-եկեղեցական աղօթքին՝ նուիրուած Հայոց Ցեղասպանութեան նահատակ սրբերին: Այնուհետեւ այցելելով Սպահանի Հայոց թեմի 24 տարիների նախկին առաջնորդ՝ գերշ. Տ. Կորիւն արք. Պապեանի շիրիմին, հաւաքական աղօթք բարձրացրին առ Աստուած, նրա հոգու խաղաղութեան համար:

Խումբն Այնճար հայաբնակ գիւղ ժամանեց յուլիսի 20-ին, որտեղ այցելեց տեղի հայկական դպրոցը, եկեղեցին եւ Մուսա լեռան 40-օրեայ հերոսամարտի յիշատակին կանգնեցուած յուշակոթողը: Խումբն այցելեց նաեւ Այնճարի բերդը եւ ծանօթացաւ այդ պատմական վայրի պատմութեանը:

Երեքշաբթի օրը բաւական յուզիչ ու տպաւորութիւններով լի էր ուխտաւորների համար, քանի որ նրանք այցելեցին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան խնամքի ներքոյ գործող «Թռչնոց Բոյն» հաստատութիւն եւ Հայոց Ցեղասպանութեան Որբերի «Արամ Պէզիքեան» թանգարան, որի բացումը կատարուել էր յուլիսի 18-ին եւ ծանօթացան ցուցադրուած իրերին եւ նկարներին:

Յուլիսի 22-ին ուխտաւորներին առիթ ընձեռուեց հանդիպելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի հետ: Հանդիպման ընթացքին ուխտաւորներն իրենց յուզող խնդիրների կապակցութեամբ հարցեր ուղղեցին Վեհափառ Հօրը եւ ստացան պատասխաններ: Խումբն արժանացաւ վեհափառ հայրապետի օրհնութեանը եւ լուսանկարուեցին:

Յաջորդ օրը խմբի անդամներն այցելեցին Բուրջ Համուդ հայկական թաղամաս: Առիթ ունեցան նաեւ այցելելու Լիսբոնի հինգ մարտիկների գերեզմանը եւ տեղի «Ազդակ» օրաթերթի շէնքը:

Ուխտաւորները Նոր Ջուղա վերադարձան բարձր տպաւորութիւններով ու յուշերով: Աստուած բոլորի ուխտը ի կատար ածէ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ԵՒ ՅՈՒՇԵՐԵԿՈՅ՝ ՀՈԳԵԼՈՅՍ ԿՈՐԻՒՆ Ս. ԱՐՔ. ՊԱՊԵԱՆԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ԱՌԹԻՒ

Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի կազմակերպութեամբ, հինգշաբթի՝ 2015 թւականի յուլիսի 2-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Նոր Ջուղայի Ս. Բեթղեհէմ եկեղեցում տեղի ունեցաւ Հոգեհանգստեան արարողութիւն եւ յուշերեկոյ՝ հոգելոյս Կորիւն Ս. արք. Պապեանի մահուան քառասնօրեակի առթիւ: Ծրագրին ներկայ էին Թեհրանի հայոց թեմի թեմական առաջնորդ գերշ. Տ. Սեպուհ արք. Սարգսեանը, Սպահանի հայոց թեմի թեմական առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանը, Սպահանի եւ Թեհրանի հայոց թեմերի ազգային իշխանութեան ներկայացուցիչները, Իսլամական մշակոյթի եւ առաջնորդութեան Սպահանի գերատեսչութեան գլխաւոր տնօրէն հոջ. դկտր. Առզանին, Սպահանի հայոց թեմի հոգեւորականաց դասը եւ հոծ թւով հայորդիներ:

Սկզբում Թեհրանի եւ Սպահանի հայոց թեմերի առաջնորդների միջոցով, մասնակցութեամբ Սպահանի հայոց թեմի հոգեւորականաց ու դպրաց դասերի եւ երգեցողութեամբ Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախմբի, ղեկավարութեամբ՝ մայեստրո Արմէն Ամիրխանեանի, տեղի ունեցաւ Հոգեհանգստեան արարողութիւն:

Կրօնական արարողութիւնից յետոյ, անմիջապէս սկսւեց յուշերեկոյի համար նախատեսւած յայտագիրը՝ Շահինշահիր հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ Գուճանեանի հաղորդավարութեամբ: Սկզբում հոգշ. Հայր Սուրբն անդրադառնալով հոգելոյս Կորիւն արք. Պապեանի նկարագրի եւ բնաւորութեան որոշ գծերին, հակիրճ կերպով ներկայացրեց նրա կենսագրականն ու գործունէութիւնը: Հոգշ. Հայր Սուրբն իր խօսքի ընթացքում ներկաներին ծանօթացրեց հոգելոյս Կորիւն Սրբազանի երեք ուսումնասիրական յօդւածներից կազմւած գունազարդ գիրքը, որը ծրագրի սկզբում բաժանւել էր եկեղեցի մուտք գործողներին: Գիրքը հրատարակւել էր Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի նախաձեռնութեամբ:

Յուշերեկոն շարունակւեց հոգելոյս Կորիւն արք. Պապեանի օրօք եւ նրա ջանքերով կեանքի կոչւած Ս. Ամենափրկչեան վանքի «Տաթեւ» երգչախմբի ներկայացրած հոգեւոր տաղերի եւ շարականների մեներգութեամբ եւ խմբերգերով, ղեկավարութեամբ մայեստրո Համիկ Ալեքսանդրեանի:

Երգչախմբի ներկայացմանը յաջորդեց հոգելոյս Կորիւն արք. Պապեանի Սպահանի հայոց թեմի առաջնորդական ժամանակաշրջանին պատկանող լուսանկար-

ների եւ տեսագրութիւնների տեսանիւթի ցուցադրումը՝ ներկաների յուշերի մէջ վերարթնացնելով հոգելոյս Սրբազան Հօր կեանքի 24 տարիների գեղեցիկ պահերն ու գործունէութիւնը:

Յաջորդիւ հրաւիրուեց Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի ատենապետ պրն. Վրէժ Տէր Մարտիրոսեանը, ով ներկայացնելով հոգելոյս Կորիւն արք. Պապեանի յատկութիւնները եւ յիշելով նրա առաջնորդական ժամանակաշրջանից դէպքեր եւ յուշեր, բախտաւոր համարեց Նոր Ջուղան, որ հանդիպած ծանր ու դժուար օրերին՝ յեղափոխութիւն, Իրաք-Իրան ութամեայ պարտադրեալ պատերազմ, ներհամայնքային երկպառակութեան ժամանակաշրջան եւ այլն, ունեցել է խոհեմ եւ ժրաջան առաջնորդ, ով կարողացել է իմաստուն կերպով ղեկավարել համայնքն ու Թեմի եկեղեցա-կրօնական կեանքը, եւ նոյնիսկ չի վարանել ռազմադաշտ գնալ ու խրախուսել հայ եւ պարսիկ քաջարի ռազմիկներին:

Մայեստրո Արմէն Ամիրխանեանի ղեկավարութեամբ, Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախմբի ներկայացրած տաղերի եւ շարականների երգեցողութիւնը գեղեցիկ շարունակութիւն եղաւ ծրագրի համար:

Ապա, յատուկ յուշերեկոյին մասնակցելու համար Թեհրանից հրաւիրուած Թեհրանի հայոց թեմի թեմական առաջնորդ գերշ. Տ. Սեպուհ արք. Սարգսեանն իր խօսքը փոխանցեց ներկաներին՝ իր հոգեւոր եղբօր եւ ուսուցչի՝ հոգելոյս Կորիւն արք. Պապեանի կեանքն ու գործունէութիւնը որակելով ամբողջական ծառայութիւն եւ նւիրում, որով նա շահել է այն բարի անունը, որը դեռ երկար մնալու է նրան ճանաչող անձանց յուշերում: Գերշ. Սրբազան Հայրը խօսեց նաեւ հոգելոյս Կորիւն արք. Պապեանի գիտական եւ մտաւորական գործունէութեան մասին, որոնք նա կատարեց ամենայն պատասխանատուութեամբ եւ լրջութեամբ:

Յուշերեկոն եզրափակեց Սպահանի հայոց թեմի թեմական առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանը՝ իր հայրական խօսքով:

Թեմական առաջնորդն իր գնահատանքն ուղղեց յուշերեկոյի կազմակերպման համար աշխատած բոլոր անձանց, ապա անդրադարձաւ հոգելոյս Կորիւն արք. Պապեանի ծառայութեանը՝ իբրեւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբանութեան հաւատարիմ եւ արժանաւոր անդամ, ով եկեղեցու ճամբով իր լաւագոյն սպասաւորութիւնը բերեց իր ժողովրդին եւ Աստծուն: Նա իր խօսքի մէջ շեշտեց, որ Կեանքը խորհուրդ խորին է եւ ժամանակներն իրենց համապատասխան եւ անհրաժեշտ մարդկանց են ծնունդ տալիս: Եւ այդպէս եղաւ ու ընթացաւ հոգելոյս Կորիւն Սրբազանի կեանքը, եզրափակեց գերշ. Բաբգէն Սրբազանը:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ՝ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Այլակերպութեան տօնի (Վարդավառ) առթիւ կիրակի՝ յուլիսի 12-ի առաւօտեան, Փերիոյ գաւառի հայաբնակ Բոլորան գիւղի Ս. Ղուկաս եկեղեցում, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանի մատուցեց Ս. եւ անմահ Պատարագ: Օրայ պատարագիչն էր արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանը, իսկ արարողութեանը մասնակցում էին Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, արժն. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանը եւ դպրաց դասը: Երգեցողութիւնը կատարուեց Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախմբի միջոցով՝ ընկերակցութեամբ Ս. Ամենափրկչեան վանքի «Տաթեւ» երգչախմբի անդամների:

Եկեղեցում ներկայ էին Բոլորան գիւղի հայ համայնքի անդամներն ու Վարդավառի տօնը նշելու նպատակով գիւղում կեցութիւն հաստատած Նոր Ջուղայից, Շահինշահրից, Թեհրանից եւ այլ շրջաններից ժամանած հայորդիներ:

Յընթացս Ս. Պատարագի թեմական առաջնորդ Սրբազան Հայրն օրուան պատշաճ իր հայրական պատգամը փոխանցեց հաւատաւոր ժողովրդին: Նա անդրադառնալով Թափոր լեռան վրայ Քրիստոսի պայծառակերպութեանը եւ այլակերպութեան պահին երկնքից լսուած Աստծու վկայութեանը՝ «Սա է իմ սիրելի Որդին, Նրան լսեցէք», աւելացրեց. «Քրիստոսը Թափոր լեռան վրայ, Իր աշակերտների դիմաց, Իր աստուածային փառքով եւ տեսիլքով այլակերպուեց ու պայծառակերպուեց, որպէսզի աշակերտները եւ նրանց միջոցով ամբողջ մարդկութիւնը ճանաչի ու տեսնի, որ Քրիստոսը եկել է մարդու համար, մարդու հետ լինելու եւ մարդուն դէպի փրկութիւն առաջնորդելու»:

Սրբազան Հայրն իր քարոզի երկրորդ բաժնում նշելով, որ Այլակերպութեան տօնի պատգամը Աստծու հետ զօրանալը, մենութեան մէջ Աստծու հետ խօսելը, աղօթելն ու սրբանալն է, ներկաներին յորդորեց տօնի աւանդական սովորութիւնները, յատկապէս միմեանց վրայ ջուր ցանելու սովորութիւնը, ծայրայեղութեան չտանել եւ տօնն իր իմաստից չպարպել: Նա պատգամեց նաեւ՝ տօնի խորհրդով փոխուել, այլակերպուել, սրբուել ու մաքրուել՝ Քրիստոսի ներկայութիւնն զգալու եւ կեանքը քրիստոնեային վայել կերպով շարունակելու համար:

Գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանն իր խօսքի աւարտին շնորհակալութիւն յայտնելով Բոլորան գիւղի եկեղեցու նախկին վարչութեանը, ուժ ու կորով մաղթեց նորանշանակ կազմին՝ գիւղը եւ եկեղեցին պայծառ պահելու գործում:

Եկեղեցական արարողութիւնից յետոյ առաջնորդ Սրբազան Հայրն այցելեց գիւղի շրջապատում վրաններ մէջ օթեւան գտած ժողովրդին եւ մասնակից լինելով նրանց ուրախութեանը, փոխանցեց իր օրհնութիւնը:

Այլակերպութեան տօնի առթիւ Ս. եւ անմահ Պատարագ մատուցեց նաեւ Նոր Ջուղայի Ս. Յովհաննու եկեղեցում՝ ձեռամբ արժն. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանի եւ երգեցողութեամբ «Շուշանիկ» հոգեւոր երգչախմբին, որին ընկերակցում էին նաեւ Ս.Ա. Վանքի «Կոմիտաս» երգչախմբի անդամներից: Արարողութեանը մասնակցում էին նաեւ արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանն ու դպրաց դասը: Պատարագիչ քահանան քարոզի պահին անդրադառնալով Այլակերպութեան դրւագին, շեշտեց աղօթքի կարեւորութիւնը, որի միջոցով մարդ այլափոխուելու եւ սրբակենցաղ ընթացք է որդեգրելու իր կեանքի ընթացքում:

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ Ս. ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ՝ ԽՈՅԳԱՆ ԳԻՒՂԻ ՀԱՄԱՆՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հայ առաքելական եկեղեցու հինգ տաղաւար տօներից Ս. Աստուածածնի վերափոխման տօնի առթիւ, ուրբաթ՝ օգոստոսի 14-ի առաւօտեան, Փերիա գաւառի Խոյգան գիւղի Ս. Աստուածածին եկեղեցում Ս. եւ անմահ Պատարագ մատուցեց նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանի: Օրուայ Պատարագիչն էր արժն. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանը, իսկ արարողութեանը մասնակցում էին նաեւ թեմի դպրաց դասը: Ընթացքում շարականների երգեցողութեամբ հանդէս եկան Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախմբի ծիսական խմբի անդամուհիները:

Հոգեպարար արարողութեանը ներկայ էին Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի ատենապետ պրն. Վրէժ Տէր Մարտիրոսեանն ու Կրօնական խորհրդի անդամ պրն. Սաքօ Տէր Յովհաննիսեանը, որոնք ընկերակցելով Սրբազան Հօրը Սպահանից ժամանել էին Խոյգան գիւղ, եւ հոծ թւով հաւատացեալ ուխտաւորներ:

Ս. Պատարագի ընթացքում գերշ. Տ. Բագէն արք. Զարեանն օրուայ խորհրդին առնչւող իր քարոզում հակիրճ անդրադարձ ունենալով Ս. Կոյսի կեանքին՝ կարեւորութեամբ ընդգծեց նրա յաւերժ կուսութեան եւ Աստուածամայր լինելու ճշմարտութիւնը՝ նշելով նաեւ, որ Ս. Աստուածածնի վերափոխման տօնի օրը ոգեկոչւում է Տիրամօր երկինք փոխադրուելու յիշատակը: Այնուհետեւ նա իր խօսքի շարունակութեան մէջ կարեւորելով Կոյսի մայրութեան տիպար լինելու փաստը, աւելացրեց. «*Ս. Կոյս Մարիամի կեանքի տիպար օրինակը բոլոր կանանց ու մայրերին ասում է, թէ իրենց կեանքն ապրեն Աստուածամօր օրինակով՝ անարատութեամբ, սրբութեամբ, համբերութեամբ, հաւատով ու աղօթքով*»:

Քարոզի մի այլ բաժնում գերշ. Սրբազան Հայրը ներկաներին յորդորեց՝ հաւատքի ներշնչման աղբիւրի այս տօնին վերանորոգել եւ զօրացնել իրենց հաւատը:

Վերջում գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանը շնորհաւորանքի խօսք փոխանցելով Ս. Կոյսի վերափոխման եւ յատկապէս Խոյգան գիւղի Ս. Աստուածածին եկեղեցու անւանակոչութեան տօների կապակցութեամբ, օրուայ արարողութեան մատուցման համար ողջունեց հոգեւորական դասի եւ երգեցիկ խմբի կատարած աշխատանքը: Նա ողջոյնի խօսք ուղղելով նաեւ Խոյգան գիւղի եկեղեցու վարչութեանն ու մի շարք անհատների՝ եկեղեցին բարեզարդ վիճակում պահելու կապակցութեամբ, իր ուրախութիւնը յայտնեց, առ այն, որ այս տօնը նշուեց հոծ թւով ուխտաւորների մասնակցութեամբ:

Ս. Պատարագի աւարտին հաւատացեալները պատարագիչ Քահանայ Հօր ձեռամբ ստացան Ս. Հաղորդութիւն, որից յետոյ թեմական առաջնորդի նախագահութեամբ տեղի ունեցաւ աւանդական Խաղողօրհնէքի արարողութիւնը եւ օրհնուած խաղողը բաժանուեց ներկաների միջեւ:

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Կիրակի՝ 2015 թւականի օգոստոսի 16-ի առաւօտեան, Ս. Կոյս Մարիամ Աստուածածնի վերափոխման տաղաւար տօնի առթիւ սուրբ եւ անմահ Պատարագ տեղի ունեցաւ Նոր Ջուղայի Ս. Մինաս եւ Ս. Աստուածածին եկեղեցիներում: Ս. Մինաս եկեղեցում պատարագեց եւ յաւուր պատշաճի քարոզեց արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանը: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեցին Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախմբի անդամուհիները:

Սպահանի հայոց թեմի թեմական առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանը նախագահեց Ս. Աստուածածին եկեղեցում տեղի ունեցող արարողութեանը, որի պատարագիչն էր արժն. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանը: Երգեցողութիւնը կատարուեց Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախմբի երկրորդ խմբի միջոցով՝ ղեկավարութեամբ խմբավար Արմէն Ամիրխանեանի:

Ս. Կոյս Մարիամ Աստուածածնի վերափոխման տօնը նաեւ Նոր Ջուղայի Ս. Աստուածածին եկեղեցու անուանակոչութեան տօնն է:

Ցընթացս Ս. Պատարագի առաջնորդ Սրբազան Հայրն իր հայրական պատգամն ուղղեց ժողովրդին, ընդ որում հակիրճ կերպով անդրադառնալով Աստուածամայր Ս. Կոյս Մարիամի կեանքին ու կենցաղին՝ որպէս տիպար կին եւ մայր, զոհողութեան եւ նուիրումի խորհրդանիշ: Թեմական առաջնորդը նշելով, որ հայ ժողովուրդը յատուկ սէր ու յարգանք է տածում Ս. Կոյսի նկատմամբ, ասաց, որ նոյն այդ սիրոյ դրսեւորումն է այգիների բերքի երախայրիքի ընծայումը Ս. Աստուածածնի վերափոխման տօնին:

Գերշ. Սրբազան Հայրն իր խօսքի մէջ նաեւ անդրադառնալով Ս. Աստուածածին եկեղեցու անուանակոչութեան տօնին, աղօթեց առ բարձրեալն Աստուած, որ Նա միշտ անսասան պահի Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին եւ շնորհաւորեց բոլոր այն անձանց, որոնց անուան տօնն էր այսօր:

Սուրբ եւ անմահ Պատարագին յաջորդեց Խաղողօրհնէքի արարողութիւնը: Եկեղեցում ներկայ բազմաթիւ հաւատացեալները տօնի առթիւ եկեղեցուն էին ընծայել խաղողի ողկոյզներ, որոնք օրհնուեցին թեմական Առաջնորդի ձեռամբ եւ պատարագիչ Քահանայ Հօր ու դպրաց դասի մասնակցութեամբ, որից յետոյ օրհնուած խաղողը բաժանուեց ներկաներին:

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ «ՔԱՆԱՆԵԱՆ» ԵՒ «ԿԱՏԱՐԻՆԵԱՆ» ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԳԵՐԱԶԱՆՑԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՃԱՄԲԱՐԸ՝ ԹԵՀՐԱՆՈՒՄ

Նոր Ջուղայի հայոց ազգային «Քանանեան» աղջկանց եւ «Կատարինեան» տղայոց միջնակարգ դպրոցների տեսչութիւնների համատեղ նախաձեռնութեամբ եւ Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի հովանաւորութեամբ, այս ամառ եւս տեղի ունեցաւ երրորդ միջնակարգի եւ նախահամալսարանական օղակի թւով 19 գերազանցիկ աշակերտ-ուհիների գնահատանքի ճամբարը՝ դէպի Թեհրան, որի մեկնումը իրականացուեց երկուշաբթի, յունիսի 29–ի երեկոյեան: Սա երկրորդ տարին է, որ Նոր Ջուղայի գերազանցիկ աշակերտների ճամբարը տեղի է ունենում Թեհրանում:

Աշակերտական խմբին ուղեկցող պատասխանատուներին գլխաւորում էին զոյգ դպրոցների փոխ-տեսուչներ Ռիմա Սիմոնեանն ու Ռուբէն Գրիգորեանը:

Եռօրեայ այս ճամբարի ընթացքում տեսարժան վայրեր այցելելու եւ յատկապէս քաղաքի հայ համայնքի ու ազգային հաստատութիւնների հետ առաւել ծանօթանալու նպատակով կազմակերպւել էին մի շարք այցելութիւններ, որոնք ոչ միայն հետաքրքիր էին մասնակիցների համար, այլեւ որպէս դաստիարակչական աշխատանք մեծ ազդեցութիւն ունեցան նրանց վրայ:

Մշակւած ծրագրի համաձայն՝ գերազանցիկներն այցելեցին «Նիաւառան» պալատ-թանգարան եւ մօտիկից ծանօթացան իրանական մշակոյթի այս հատւածին ու պատմութեանը:

Աշակերտները յաճախեցին նաեւ «Ալիք» հաստատութիւն, որտեղ նրանց ջերմ դիմաւորեցին հաստատութեան տնօրինութիւնը, «Ալիք» օրաթերթի խմբագրական կազմն ու աշխատողները՝ աշակերտների մօտ հարազատ տան մէջ գտնւելու զգացում առաջացնելով: Պատանի այցելուներին հետաքրքրեց յատկապէս օրաթերթի տպագրման համար տարւող աշխատանքը եւ մտաւորական խաւի հետ շփումը: «Ալիք» հաստատութիւնում եղած ժամանակ հանդիպում կայացաւ նաեւ իրանահայ անւանի բանաստեղծ Վարանդի հետ, ով խօսեց հայ պոէզիայի ու իր ստեղծագործական կեանքի մասին եւ սպառիչ պատասխաններ տւեց աշակերտների հարցերին:

Կեանքի դպրոց կարելի է համարել «Յակոբեան» հագուստի արդիւնաբերութեան միաւոր կատարած այցելութիւնը, որտեղ աշակերտները հանդիպելով իրանահայ յաջողակ գործարար Սմբատ Յակոբեանին, շատ հետաքրքիր եւ ուսուցողական զրոյց ունեցան նրա հետ: Տպաւորիչ էր յատկապէս այն փաստը, որ պրն. Յակոբեանն իր աշխատանքում առաջադիմել եւ համբաւ է ձեռք բերել՝ իր նպատակասլացութեան, կուռ կամքի, կարգապահութեան ու աշխատասիրութեան շնորհիւ:

Ճամբարի մասնակիցները յաճախեցին «Դելֆինարիում» եւ «Աբ վա աթաշ» նորառոճ խաղերի զբօսայգի, ինչու չէ նաեւ «Միլադ» աշխարհահռչակ աշտարակ, որտեղ ծանօթացան սոյն կոթողի ճարտարապետական յատկութիւններին եւ հմայւեցին քաղաքի երեկոյեան հիասքանչ տեսարանով:

Խումբը Նոր Ջուղա վերադարձաւ յուլիսի 2-ին, մեծ հետաքրքրութեամբ ընկալելով ուղեւորութեան ընթացքում իրենց հրամցւած տեղեկութիւնները եւ բաւականութիւն ստանալով կազմակերպւած բոլոր ծրագրերից: Խորապէս համոզւած ենք, որ այս ճամբարի գեղեցիկ յուշերը դեռ երկար տարիներ թարմ է մնալու նրանց յիշողութիւններում:

Թեհրան եղած ժամանակահատւածում աշակերտները կեցութիւն էին հաստատել Հ.Մ.Ա.Կ.-ում, ինչի համար իրենց շնորհակալութիւն են յայտնում այս հաստատութեան պատասխանատուներին: Խորին շնորհակալութիւն են յայտնում յատկապէս «Ալիք» հաստատութեան տնօրինութեանն ու անձնակազմին եւ «Յակոբեան» ընկերութեան սեփականատէրերին՝ համագործակցութեան եւ գրկաբաց ընդունելութեան համար:

Ð²Úàò È°¼ôÆ °ô ¶ð²Î²ÜàôÂ°²Ü 7-ð¸ úÈÆØäÆ²¸²ÚÆÜàð æàôÔ²ÚÆØ²êÜ²ÎÆòÜ°ðÀê. ²Ø°Ü²öðÎâ°²Ü ì²ÜøàôØ

Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին նուիրուած Հայաստանում կայանալիք Հայոց լեզուի եւ գրականութեան 7-րդ համահայկական օլիմպիադային եւ Հայոց եկեղեցու պատմութեան մրցոյթին մասնակցելու նպատակով Նոր Ջուղայի հայոց ազգային «Քանանեան» դպրոցի 8-րդ դասարանի եւ առաջին, երկրորդ ու երրորդ միջնակարգ բաժնի ընտրեալ աշակերտուհիները, ովքեր ամիսներ շարունակ իրենց ուսուցչուհիների եւ պատասխանատուների միջոցով զբաղուել էին նախապատրաստական աշխատանքով, իրենց ծնողների եւ դպրոցի պատասխանատուների հետ, հինգշաբթի, յուլիսի 16-ին, ներկայացան Ս. Ամենափրկչեան վանք եւ Ծաղկեայ դահլիճում հանդիպում ունեցան Շահինշահիր հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանին: Հանդիպմանը ներկայ էին նաեւ Կրթական խորհրդի ներկայացուցիչները:

Հայր Սուրբը ուրախութեամբ ողջունեց օլիմպիադային մասնակցող աշակերտուհիներին եւ իր օրհնութիւնը տուեց նրանց՝ վստահ լինելով, որ նրանք արժանի կերպով արդարացնելու են իրենց: Նա նաեւ գնահատեց աշակերտուհիների կողքին եղած եւ նրանց պատրաստման համար աշխատած պատասխանատուներին, ուսուցչուհիներին ու ծնողներին:

Մասնակիցներն իրենց տպաւորութիւնները կիսեցին ներկաների հետ եւ շնորհակալական խօսքեր ուղղեցին իրենց ուսուցչուհիներին: Այնուհետեւ օլիմպիադային մասնակցող խմբի ընդհանուր պատասխանատու Ռիմա Սիմոնեանը մանրամասնութիւններ փոխանցեց մասնակցութեան համար տարուած նախապատրաստական աշխատանքների մասին:

Հանդիպման ընթացքում հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի ձեռամբ, Հայոց դպրոցի պատասխանատուների պատրաստած նւէրով, գնահատեց նաեւ 2014-15 ուսումնական տարեշրջանում Ն.Ջ. Հայոց ազգային «Քանանեան» դպրոցի լաւագոյն աշակերտի կոչումին արժանացած Արփա Մարգարեանը, ով այս տարի զուգադիպութեամբ մաս է կազմում օլիմպիադային մասնակցող խմբին:

Հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանին օրհնութիւնն ստանալուց եւ «Տէր ուղղեա՜ զգնացս» աղօթքն ունկնդրելուց յետոյ, մասնակիցները Ս. Ամենափրկչեան վանքի բակում Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին վեր խոյացած յուշարձանի առջեւ ծաղիկներ մատուցելով՝ իրենց յարգանքը յայտնեցին բիւրաւոր նահատակների հոգիներին:

***

Ð²Ú²¶Æî²Î²ÜÐ²Ø²Ð²ÚÎ²Î²Ü 7-ð¸ úÈÆØäÆ²¸²ÚÆÚ²ÔÂàÔÜ°ðÀ Ö²Ü²âô°òÆÜÜàð æàôÔ²ÚÆ ²Þ²Î°ðîàôÐÆÜ°ðÀ

Յուլիսի 21-ից մինչեւ 27-ը Աղուերանում, ՀՀ Կրթութեան եւ գիտութեան նախարարութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ Հայագիտական համահայկական 7-րդ օլիմպիադան՝ նուիրուած Հա-

յոց Ցեղասպանութեան 100-ամեակին, 7 երկրներից ժամանած աշակերտների մասնակցութեամբ:

7-րդ օլիմպիադան ընդգրկում էր հարցեր հայոց լեզուից, գրականութիւնից, հայոց պատմութիւնից եւ հայ մշակոյթի պատմութիւնից, որին զուգահեռ անցկացուեց նաեւ Հայ Եկեղեցու պատմութեան մրցոյթը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնէական դաստիարակութեան կենտրոնի հովանաւորութեամբ եւ աջակցութեամբ:

Մրցոյթին մասնակցել էին Նոր Ջուղայի հայոց ազգային «Քանանեան» աղջ. դպրոցի 8-րդ դասարանի եւ առաջին, երկրորդ ու երրորդ միջնակարգ բաժնի ընտրեալ 10 աշակերտուհիներ, ուսուցչուհիներ՝ Ռիմա Սիմոնեանի եւ Սեդա Դիլանչեանի գլխաւորութեամբ:

Միջոցառման փակման հանդիսութեան օրը, արդիւնքների ամփոփումից յետոյ, Հայագիտական համահայկական 7-րդ օլիմպիադայի յաղթողը ճանաչուեց Նոր Ջուղան իր մասնակիցների ձեռքբերած բացառիկ եւ աննախադէպ մրցանակների թւաքանակի շնորհիւ՝ իրեն վերապահելով օլիմպիադայի եւ հայ եկեղեցու պատմութեան մրցոյթի հինգ առաջին կարգի, երեք 2-րդ կարգի եւ մէկ 3-րդ կարգի մրցանակները: Ասմունք անուանակարգում Նոր Ջուղայի աշակերտուհիները նաեւ արժանացել են երկու շնորհակալագրի:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՒԻՐՈՒԱԾ ՏԱՐԱԶՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Միջազգային համբաւ ձեռք բերած սփիւռքահայ մոդելաւորող՝ Գէորգ Շադոյեանը, թւականիս յուլիսի 9-ին, Նոր Ջուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան հանդիսութիւնների դահլիճում ցուցադրեց Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նւիրուած իր «Վերածնունդ» տարազների հաւաքածուն, որ ներկայացնում էր 18-րդ դարավերջի եւ 19-րդ դարասկզբի հայկական տարազների ցուցանմուշները:

Հաւաքածուն բաղկացած է Մուշի, Տարօնի, Տրապիզոնի, Սիւնիքի, Արցախի, Խարբերդի, Կիլիկիայի, Զէյթունի, Կարինի, Վասպուրականի, Բաղէշի, Սեբաստիայի Գովտուն գիւղի եւ թեհրանահայի կնոջ 26, տղամարդու 8 եւ մանկական 15 տարազների ցուցանմուշներ: Այս բացառիկ եւ իւրօրինակ հաւաքածոյի ցուցադրումը եզրափակուեց Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի խորհրդանիշ անմոռուկ ծաղկի պատկերով ստեղծուած զգեստի ցուցադրումով, որը զուգորդուած էր Մանէ Թահմազեանի կատարմամբ՝ «Դլէ եաման» երգերով:

«Գէորգ Շադոյեանն իր այս հաւաքածուն ստեղծելու նպատակով շրջել է Հայաստանի տարբեր շրջանները, բոլոր տարազների թանգարանները եւ ուսումնասիրել տպագիր աղբիւրները եւ համադրելով իր վառ երեւակայութիւնն ու աւանդական զգեստների տարրերը՝ կտորի տեսակը, գարդանախշերը եւ գոյները, հնի ու նորի համադրութեամբ ստեղծել է զգեստներ,

որոնցով վերածնունդ է տուել հայկական աւանդական տարազներին»,- նշուած էր բացման խօսքում, որով հանդէս եկաւ հանդիսավարուհի Մանիա Ղուկասեանը:

Երեկոն հագեցած էր նաեւ «Shadoyan fashion» ապրանքանիշի գիշերային զգեստների հաւաքածոյի տեսանիւթի ցուցադրութեամբ, պարով, ասմունքով եւ երգերով, որոնք կատարեցին Հայաստանից ժամանած մենապարուհի Արիգա Պետրոսեանը, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Մշակութային միաւորի «Կռունկ» համոյթի ասմունքող Կարէն Խանլարեանը եւ Թեհրանից ժամանած երգիչ Էդուարդ եւ գիտարիստ Էդուին Աբրահամեան եղբայրները:

Երեկոն ամփոփեց ձեւագէտ Գէորգ Ճադոյեանի շնորհակալական խօսքերով ուղղուած կազմակերպիչներին, մոդելներին, մանուկների ծնողներին եւ ծրագրի գեղարուեստական բաժնի պատասխանատուներին ու կատարողներին եւ առանձնապէս իրանահայ Արթուր Ասատրեանին՝ նիւթերը ձեռք բերելու կապակցութեամբ եւ բոլոր աջակիցներին: Նա տեղեկութիւններ փոխանցեց նաեւ «Վերածնունդ» հաւաքածոյի քարոզչական աշխատանքների կապակցութեամբ, ինչն սկսուել է Արցախից, ապա Ռուսաստան, Հայաստան, Իրան եւ շարունակուելու է Աւստրալիայում, Ֆրանսիայում, Ա.Մ.Ն.-ում եւ այլուր:

Վերջում միութեանս Կենտրոնական վարչութեան նախագահ Մասիս Մինասեանը յուշանուէր յանձնեց պրն. Ճադոյեանին եւ «Նայիրի» միութեան նախագահ՝ Ֆրեդ Աշուղեանին:

Երեկոյի աւարտին ներկաներն այցելեցին դահլիճին կից սրահում կազմակերպուած նշեալ տարազների լուսանկարների ցուցահանդէսը:

Յատկանշելի է, որ Իրանում «Վերածնունդ» տարազների ցուցադրման մեկնարկը տրուել էր Թեհրանում՝ Հայ Մ.Մ. «Նայիրի» միութեան հրաւէրով, իսկ նոր Ջուղայում՝ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Մշակութային միաւորի վարչութեան հրաւէրով:

Ծրագրի հովանաւորողներն էին Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի ոգեկոչման Նոր Ջուղայի Կենտրոնական յանձնախումբը եւ Ն.Զ. Հայ Կանանց գթութեան միութիւնը, իսկ Իրանում տարազների ցուցադրման հովանաւորողներն էին «Ալիք» հաստատութիւնը, «ice monkey» բնական հիւթերի ընկերութիւնը, «balloon land» ընկերութիւնը եւ «Սաբերան» տուրիստական գործակալութիւնը:

ÈÆê´àÜÆ ÐÆÜ¶Ø²ðîÆÎÜºðÆ ÚÆÞ²î²ÎÆÜ ÜôÆðô²Ì üàôî´àÈÆ 25-ð¸ Ê²Ôºð Üàð æàôÔ²ÚàôØ

Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Սկաուտական միաւորի Գերագոյն մարմնի նախաձեռնութեամբ եւ համագործակցութեամբ միութեան ֆուտբոլի յանձնախմբի, թւականիս յուլիսի 26-ից 30-ը միութեան մարզական բաժնում տեղի ունեցաւ ֆուտբոլի 25-րդ ընկերական խաղերը:

Մրցաշարը նուիրուած էր Հայ Յեղափոխական Բանակի հինգ մարտիկներ՝ Սեդրակ Աճեմեանի, Վաչէ Դաղլեանի, Արա Քերջլեանի, Սիմոն Եահնեանի եւ Սարգիս Աբրահամեանի յիշատակին, ովքեր 1983 թ. յուլիսի 27-ին անձնազոհական մի ակտով զինուած յարձակում կատարեցին Պորտուգալիայի մայրաքաղաք Լիսբոնում տեղակայուած Թուրքիայի դեսպանատան վրայ եւ 3-ժամեայ գրաւումից յետոյ՝ պայթեցրին այն ու փլատակների տակ ողջակիզելով բարձրաձայնեցին Հայոց Յեղասպանութեան իրողութիւնն ու Թուրքիոյ պետութեան կողմից դրա ուրացումը:

Հնգօրեայ մրցաշարի ընթացքում մրցադաշտ իջան համայնքի երիտասարդներից կազմուած՝ «Արարատ», «Փիւնիկ», «Աղթամար», «Վաչէ», «Սարդարապատ» եւ «Գիւմրի» սիրողական խմբերը:

Եզրափակիչ փուլում մրցակցեցին «Գիւմրի» եւ «Վաչէ» խմբերը, որի արդիւնքում յաղթող ճանաչուեց «Վաչէ» խումբը:

Նշելի է, որ Լիսբոնի հինգ մարտիկների յիշատակին կազմակերպելու է նաեւ յուշերեկոյ, որի ընթացքում կը պարգեւատրուեն առաջին եւ երկրորդ տեղը զբաղեցրած խմբերի անձնակազմը եւ մրցավարութիւնը սիրայօժար կերպով ստանձնած իրաւարար կազմը:

Մրցաշարն իրականացաւ Սկաուտական միաւորի կազմակերպիչ յանձնախմբի անվերապահ աջակցութեամբ, որի անձնակազմը ներկայացնում էին Թադէ Ղարիբեանը, Արփիար Դաւթեանը, Սիփան Անդրիասեանը, Սասուն Սիմոնեանը, Արայիկ Սիմոնեանը, Շանթ Մելքոնեանը եւ Դերենիկ Թորոսեանը:

Ð²Ø²Ð²ÚÎ²Î²Ü 6-ð¸ Ê²Ôºð ÆÜØ²êÜ²Îò²Ì Üàð æàôÔ²ÚÆØ²ð¼ÆÎÜºðÀ

Ուրբաթ՝ 31 յուլիս 2015 թւականի առաւօտեան Նոր Զուղայի Խոջա-Պետրոս պողոտան մարդաշատ էր: Բազմութեան հիմնական մասը մարզիկ-ուհիներ էին, ովքեր մեկնում էին հայրենիք՝ մասնակցելու Համահայկական 6-րդ խաղերին: Բարի երթի արարողութեանը ներկայ էին արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանը, Ազգային մարմինների ներկայացուցիչները եւ մարզիկների ծնողները:

Արժն. Քահանայ Հայրն աղօթեց եւ բարի երթ մաղթեց մարզիկներին, այն յոյսով, որ մարզական բարձր ոգով ու տրամադրութեամբ թողնելու են Նոր Զուղան եւ վերադառնալու են յաղթանակներով: Մարզիկներին իր բարեմաղթանքները փոխանցեց Թեմական խորհրդի ատենապետ պրն. Վրէժ Տէր Մարտիրոսեանը:

Սպահանի Հայոց թեմի պատուիրակութեան թիւը 84 հոգուց էր բաղկացած, ներառեալ մարզիկներ, մարզիչներ եւ պատասխանատուներ: Պատուիրակութիւնը մասնակցեց ֆուտբոլ, բասկետբոլ (օրդ. եւ տղ.), թեթեւատլետ (օրդ. եւ տղ.), թենիս (տղ.), լող (օրդ. եւ տղ.), բազկամարտ (տղ.), սեղանի թենիս (օրդ. եւ տղ.), հեծանուասպորտ (տղ.) եւ շախմատ (տղ.) մարզաձեւերով:

§Ø²ð¼²Î²Ü à¶Æ ºôÐ²Ø´ºðàôÂÆôÜ ¸ðêºôàð²Ì ä²îôÆð²ÎàôÂÆôÜ¦ØðÒ²Ü²ÎªÜàð æàôÔ²ÚÆ Ø²ð¼ÆÎÜºðÆÜ

Օգոստոսի 13-ին, Երեւանի Ազատութեան հրապարակում տեղի ունեցաւ Համահայկական ամառային 6-րդ խաղերի փակման հանդիսաւոր արարողութիւնը:

Միջոցառման ընթացքում ՀՀ վարչապետ Յովիկ Աբրահամեանը յանձնեց Համահայկական խաղերի Համաշխարհային կոմիտէի կողմից 6 անւանակարգերում սահմանուած յատուկ մրցանակներ:

Մրցանակների շարքում, Նոր Ջուղայի մարզական պատուիրակութիւնը արժանացաւ «Մարզական ոգի եւ համբերութիւն դրսեւորած պատուիրակութիւն» անւանակարգի մրցանակին:

ì ºð²´²òôºò ö ºðÆ² ¶²ô²èÆÐ²Ú²´Ü²Î´àÈàð²Ü ¶ÆôÔÆ²èàÔæ² ä²ÐàôÂº²Ü ÎºÜîðàÜÀ

Կիրակի՝ օգոստոսի 30-ին, կառավարութեան շաբաթուայ առթիւ, Փերիա գաւառի Բոլորան գիւղում, վերանորոգումից յետոյ վերաբացւեց «Խանէ Բեհդաշթ» անւամբ առողջապահութեան կենտրոնը: Շէնքը հիմնական վերանորոգւել է եւ կենտրոնն օժտւել է մի շարք բժշկական արդիական սարքերով, որոնց համար անհրաժեշտ ֆինանսաւորումները կատարւել են երկրի Առողջապահութեան նախարարութեան միջոցով:

Բացման հանդիսութեանը ներկայ էին՝ Բուին-Միանդաշթ քաղաքի ուրբաթօրեայ աղօթապետ հոջ. Ռաշւանդին, արժն. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանը, Իսլամական խորհրդարանում Փերիոյ շրջանի պատգամաւոր պրն. Ասֆանանին, Բուին-Միանդաշթ քաղաքի գաւառապետ պրն. Թահանիանզադէն, առողջապահութեան ցանցի տնօրէն դկտ. Քէյխային, Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի Փերիոյ շրջանի պատգամաւոր Զանի Նազարեանն ու գիւղի հայ բնակիչները:

Մուտքի ժապաւէնը հատւեց պաշտօնական հիւրերի միջոցով, որից յետոյ ներկաներն առիթ ունեցան ականատեսը լինելու վերանորոգւած շէնքի եւ նոր հանարաւորութիւնների:

Շնորհաւորանքի խօսքով ու բարեմաղթանքներով հանդէս եկան արժն. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանը, հոջ. Ռաշւանդին եւ պրնյք. Ասֆանանին, Թահանիանզադէն ու Զանի Նազարեանը: Գաւառապետ Թահանիանզադէն իր խօսքում խոստացաւ 300 միլիոն ռիալի յատկացում կատարել կենտրոնի շրջափակի բարեկարգման համար: Քահանայ Հայրը Թեմի ազգային իշխանութեան անունից շնորհաւորանքներ փոխանցեց բուժարանի վերաբացման առթիւ եւ շնորհակալութիւն յայտնեց կենտրոնն արդիական սարքերով օժտելու կապակցութեամբ: Իսկ պրն. Նազարեանը շեշտելով, որ երկրի ապահովութիւնից յետոյ կարեւորագոյն խնդիրներից է համարւում ժողովրդի առողջապահութեան հարցը, իր ուրախութիւնը յայտնեց Փերիոյ շրջանի մուսուլման եւ քրիստոնեայ բնակիչների միջեւ առկայ խաղաղ գոյակցութեան համար՝ այն լաւագոյն օրինակը համարելով Իրանում տարբեր կրօնների նկատմամբ տածւող յարգանքի:

Բուժկենտրոնում ամենօրեայ կարգով ներկայ է լինելու արհեստավարժ բուժանձնակազմ՝ բնակիչների առողջական վիճակին վերահասու լինելու եւ յատուկ ծրագրերի միջոցով գիւղի առողջապահութեան մակարդակը բարձրացնելու նպատակով: Իւրաքանչիւր երեքշաբթի օր այցելելու է մէկ բժիշկ, հիւանդներին բուժելու եւ մասնագիտական խորհուրդներով աշխատանքներին առաւել դիւրին ընթացք տալու համար:

ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՇԱՀԻՆՇԱՀՐ

Չորեքշաբթի, 2015 թ. յուլիսի 1-ի առաւօտեան ժամը 10-ին, Սպահանի հայոց թեմի բարեջան առաջնորդ՝ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը՝ թեմի Կրօնական խորհրդի ատենապետ պրն. Վարուժ Մովսիսեանի ուղեկցութեամբ այցելեց Շահինշահր, որտեղ հանդիպում ունեցաւ Հայ համայնքի վարչութեան անդամների հետ:

Հանդիպմանը, որին ներկայ էր նաեւ համայնքի հոգեւոր տեսուչ՝ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, քննարկուեցին համայնքի մի շարք կրօնական հարցեր՝ այդ թւում անհրաժեշտ համարուեց համայնքի համար նշանակել մնայուն քահանայ՝ համայնքի կրօնական կեանքն առաւել կարգաւորելու նպատակով եւ աշխատել «Նարեկ» եկեղեցական երգչախմբի թւաքանակը բարձրացնելու ուղղութեամբ: Իսկ ինչ վերաբերում է ուսումնական տարեշրջանի ընթացքում «Սրբոց Վարդանանց» դպրոցում կազմակերպուող կիրակնօրեայ դասընթացներին, այսուհետ նշեալ դասընթացները ղեկավարուելու են հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի միջոցով՝ դպրոցի Ուսուցչական կազմի համագործակցութեամբ:

Հարկ է նշել, որ անհրաժեշտ համարուեց համայնքի ուսանողների համար պարսկերէն լեզուով կրօնի դասընթացներ կազմակերպել՝ ընդհանրապէս հասարակութեան մէջ պարսկական շրջանակներում՝ կրօնական հարցերի կապակցութեամբ ճիշտ եւ սահուն արտայայտուելու նրանց ունակութիւնը բարձրացնելու նպատակով:

Սոյն նիստի թւականը զուգադիպելով հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի ծննդեան տարեդարձին, առիթը պատեհ համարելով, հանդիպման ընթացքում Վարչութեան նախաձեռնութեամբ նշուեց նաեւ հոգշ. Հայր Սուրբի ծննդեան տարեդարձը՝ բարձր գնահատելով յիշեալի մատուցած կրօնա-բարոյական առաքելութիւնը համայնքում, մաղթելով նրան երկար տարիների առողջ կեանք եւ բեղուն գործունէութիւն: Այդ առիթով տեղի ունեցաւ համեստ հիւրասիրութիւն:

ՈՒՐԱԽ ԺԱՄԱՆՑ Ն.Ջ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՄԱՍՆԱՃԻՒՂՈՒՄ

Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի մարզական միաւորի նախաձեռնութեամբ, յուլիսի 1-ի երեկոյեան ժամը 18:00-ին, անցկացուեց ուրախ ժամանց՝ Շահինշահրի Հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցների վեցերորդից ութերորդ դասարանների աշակերտների մասնակցութեամբ:

Մասնաճիւղի վարչութեան անդամները սիրալիր ընդունեցին բոլորին: «Ս. Վարդանանց» դպրոցի փոքր սրահը զարդարուել էր փուչիկներով, տեղադրուել էին ծխարձակող եւ գոյնզգոյն լոյսերով սարքեր:

Սկզբում երեխաները ջերմ մթնոլորտում զրոյց ունեցան վարչութեան անդամների հետ՝ իրենց յուզող հարցերի եւ խնդիրների վերաբերեալ: Այնուհետեւ ակտիւօրէն մասնակցեցին կազմակերպուած խաղերին ու մրցութիւններին. յաղթողներին որպէս քաջալերանք յանձնուեցին փոքրիկ նուէրներ: Երեխաները, չյոգնելով ու չձանձրանալով, խնդրում էին կրկնել խաղ-մրցութիւնները: Խնջոյքի ժամանակ երեխաները ուրախ պարեցին եւ ժամանակն անցաւ անկնկատ:

Հիւրասիրուելով եւ հաճելի երեկոյ անցկացնելով, երեխաները շնորհակալութիւն յայտնեցին եւ ժամը 21:00-ին հրաժեշտ տուեցին կազմակերպիչներին՝ իրենց հետ տանելով գեղեցիկ յուշեր:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ ՀԱՅԿԱՇԷՆՈՒՄ

Շահինշահիր Հայ համայնքի վարչութեան նախաձեռնութեամբ, 2015 թւականի օգոստոսի 4-ից մինչեւ 10-ը, համայնքիս երիտասարդ-ուհիների համար հնգօրեայ բանակում էր կազմակերպւել դէպի Հայկաշէն, որը նուիրւած էր Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին:

Սոյն բանակումի 34 մասնակիցը միջնակարգ դպրոցի աշակերտներ եւ համալսարանի ուսանողներ էին, ովքեր Համայնքի վարչութեան կողմից նշանակւած պատասխանատու յանձնախմբի հետ, թւականիս օգոստոսի 4-ի երեկոյեան ժամը 10-ին մեկնեցին դէպի Հայկաշէն:

Յանձնախմբի անդամներն էին ընդհանուր պատասխանատու՝ Ռազմիկ Մարկոսեան, ատենապետ՝ Արարատ Աղախանեան, խորհրդատու անդամներ՝ Ալբերտ Մինասքանեան, Գայիանէ Վարդանեան, Մաոիթա Վարդանեան, Սքաղլեթ Խուդավերդեան: Իսկ Համայնքի վարչութեան ներկայացուցիչներն էին Մաոիթա Քեշիշեանը եւ Արիս Դաւթեանը:

Այս հնգօրեայ բանակումի ընթացքում առիթ ընձեռւեց մասնակիցներին աւելի լաւ ճանաչել միմեանց՝ նոր ընկերութիւններ ստեղծել, որն իր հերթին կը նպաստի համայնքում առաւել համերաշխ միջավայր հաստատելու կարեւորագոյն գործին:

Երիտասարդ-ուհիները պատասխանատուների հետ այցելեցին Հայկաշէնի եւ Նուռ քաղաքի հետաքրքիր եւ տեսարժան վայրերը: Միասին ապրեցին հաճելի եւ յիշարժան պահեր, յաճախ հնչեցնելով հայ երգն ու երաժշտութիւնը, որը գրեթէ միշտ անբաժան է հայկական ցանկացած ուրախ հաւաքոյթից:

Բանակումի փակմանը Վարչութեան անունից պրն. Ռազմիկ Մարկոսեանն շնորհակալական խօսք ուղղեց մասնակիցներին՝ աշխոյժ մասնակցութիւն ցուցաբերելու համար եւ բարձր գնահատեց նրանց դրսեւորած կարգապահութիւնն ու յանձնառութիւնը, յոյս յայտնելով որ երիտասարդների միջեւ հաստատւած սէրն ու համակրանքը՝ խթան կը հանդիսանան համայնքի կեանքի փոխ-յարաբերութիւնների առաւել զարգացմանը:

Երիտասարդ-ուհիների անունից օրդ. Նոռա Աղախանեանը, երախտագիտութիւն յայտնեց պատասխանատու յանձնախմբին՝ նրա ցուցաբերած աշխատանքի համար: Վերոյիշեալն իր խօսքի աւարտին շնորհակալութիւն յայտնեց նաեւ Համայնքի վարչութեանը՝ այդ գեղեցիկ առիթը նրանց ընձեռելու համար, յուսալով, որ նմանատիպ բանակումներ յաճախակի կազմակերպւեն:

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԸ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Կիրակի՝ 2015 թւականի օգոստոսի 16-ի առաւօտեան, Շահինշահիր «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում մատուցւեց սուրբ եւ անմահ Պատարագ, Ս. Աստուածածնի Վերափոխման տօնի առիթով՝ արժն. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանի ձեռամբ: Օրւայ խորհրդին, ինչպէս միշտ, իրենց առատ նուիրատուութեամբ ներկայ էին համայնքի բարեպաշտ հայորդիները:

Արժն. Քահանայ Հայրք քարոզի պահին անդրադարձաւ Ս. Կոյս Մարիամի ծննդեան, յաւերժ կուսութեան, Աստուածամայր ընտրւելու իրողութեան եւ երկինք փոխադրւելու գլխաւոր հանգրւաններին: Նա իր քարոզում թւարկեց Ս. Կոյսի բարեմասնութիւնները, որոնց շնորհիւ Բարձրեալի կողմից արժանացաւ Աստուածամայր լինելու նուիրական փառքին: Այնուհետեւ անդրադառնալով խաղողօրհնէքին, ամփոփ կերպով ներկայացրեց հեթանոսական շրջանից ժառանգած աւանդոյթը՝ Ս. Կոյսի Վերափոխման տօնին վերագրւելուն՝ հանդիսանալով Հայոց առաքելական սուրբ եկեղեցու չորրորդ տաղաւար տօնը:

Իր քարոզի աւարտին, արժն. Քահանայ Հայրն աղօթելով, որ Աստուած բոլորին պարգեւի առողջութիւն, յաջողութիւն եւ քրիստոնէական ամուր հաւատ՝ շնորհաւորեց բոլոր նրանց, որոնց անւանակոչութեան տօնն էր եւ շնորհակալութիւն յայտնեց Շահինշահիր Հայ կանանց եկեղեցասիրաց միութեան անդամներին, դպրաց դասին եւ բոլոր մասնակիցներին՝ իրենց ներկայութեան համար:

Յաւարտ Ս. Պատարագի տեղի ունեցաւ Խաղողօրհնէքի արարողութիւնը եւ Շահինշահիր Հայ կանանց եկեղեցասիրաց միութեան անդամուհիների համագործակցութեամբ ու դասաւորութեամբ օրհնած խաղողը բաժանւեց ներկաներին:

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅ ՈՒՍ. ՉՀԱՐՄԱՀԱԼ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Հինգշաբթի՝ 2015 թւականի օգոստոսի 6-ին, Սպահանի հայոց թեմի թեմական առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանը ընդունեց Հայ Ուս. Չհարմահալ միութեան Նոր Ջուղայի մասնաճիւղի նորընտիր վարչութեան անդամներին:

Նորընտիր վարչութեան նախագահ պրն. Վրթանէս Մկրտչեանը առաջնորդ Սրբազան Հօրը ներկայացրեց միութեան վարչութեան անդամներին: Նա իր խօսքերի մէջ շնորհակալութիւն յայտնեց թեմական առաջնորդին՝ միութեան աշխատանքներն ու ձեռնարկները հովանաւորելու համար: Պրն. Մկրտչեանը տեղեկացրեց նաեւ միութեան Նոր Ջուղայի մասնաճիւղի վարչութեան նոր գրասենեակի կապակցութեամբ, որի բացումը կատարուելու է մօտ ապագայում:

Գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանը ողջունելով միութեան վարչութեան անդամների ներկայութիւնը, գնահատեց նրանց նուիրումով աւլեցուն գործունէութիւնը եւ յաջողութիւն մաղթեց բոլորին:

Ö²ðî²ð²¶¾î èàô´¾ÜØÆÜ²ê º²ÜÆ º¼²ÎÆ¶ÆôîÀª²ð¸ÆôÜ²´ºðàôÂº²Ü àÈàðîàôØ

Իրանահայերը բազմաթիւ անգամներ գիտական ասպարէզում յաջողութիւններ արձանագրելով՝ դարձել են ոչ միայն իրենց ընտանիքների, այլեւ համայնքի հպարտութեան առիթը: Այդ թւում է գտնուում ճարտարագէտ-գիտնական Ռուբէն Մինասեանը, ով արդիւնաբերութեան ոլորտում իր բացառիկ գիւտով՝ արժանացել է մասնագէտների եւ գիտնականների ուշադրութեանն ու գնահատանքին:

Երիտասարդ էլեկտրաճարտարագէտը հետազօտական լայն աշխատանքների արդիւնքում յաջողել է ստեղծել մի սարք, որի միջոցով հնարաւոր է ամենակարճ ժամանակահատուածում եւ ամենասակաւ վճարումով ստուգել ու տարանջատել ինքնաշարժի շարժիչի պտոյտի, արագաչափի եւ թթուածնի սենսորների էլեկտրոնային շրջաններում առաջացած թերութիւնները: Իր տեսակի մէջ եզակի այս գիւտի օգտագործման դիւրին եղանակի ու մատչելի գնի շնորհիւ նախատեսւում է այն լայն ընդառաջում գտնի օգտատէրերի կողմից:

Իրանական 1393 թւականի ազատ ամսին սարքը ներկայացուել է Հնարամիտների ազգային հիմնարկի ամենամեայ գիւտերի փառատօնին, որտեղ էլ արժանացել է իրաւարարների յատուկ գնահատագրին, իսկ նոյն թւականին այս նորարարութիւնը որպէս գիւտ հաստատուել է Երկրի կալուածների եւ փաստաթղթերի գրանցման կազմակերպութեան կողմից եւ ստացել համապատասխան հաստատագիր՝ 82644 գրանցման համարի ներքոյ: Սարքի ստեղծման գործում գիւտարարի հետ համագործակցել է իր կրտսեր եղբայրը՝ Արմօ Մինասեանը, որը նոյնպէս էլեկտրաճարտարագէտ է:

Ռուբէն Մինասեանը ծնուել է 1988 թւականին Նոր Ջուղայում: Իր նախնական կրթութիւնն ստացել է Ն. Ջ. հայոց ազգային «Արմէն» տարրական ու «Կատարինեան» ուղեցոյց դպրոցներում, իսկ միջնակարգը՝ «Փոյանդեգան»-ում, որտեղից էլ ստացել է դիպլոմ թւաբանութեան ճիւղում: Բարձրագոյն կրթութեան նկատմամբ սէրը երիտասարդին մղում է ուսումը շարունակելու համալսարանում եւ մասնակցելով պետական համալսարանների մուտքի քննութիւններին, ընդունւում է Շահրեքոդի Պետական համալսարանի էլեկտրաճարտարագիտութեան ճիւղում եւ շրջանաւարտ դառ-

նում գերազանց գնահատականներով: Լիսանսի մակարդակում ուսանելու ընթացքում որպէս առնչող գիտաշխատութիւն՝ Ռուբէնը նախագծել եւ ստեղծել է ինքնաշարժի վերահսկման էլեկտրոնիկ համակարգն ստուգող թւային սարք: 2011 թւականին, մասնակցելով գերլիսանսի մակարդակի մուտքի քննութիւններին, նրան յաջողւում է նւաճել կոնկուրսի 291-րդ տեղը եւ ընդունւել Սպահանի Պետական Արդիւնաբերական համալսարանի էլեկտրաճարտարագիտութեան ճիւղում՝ հակակշռման թեքումով, որը նոյնպէս աւարտել է գերազանց միջինով:

Ռուբէնը որպէս գերլիսանսի աւարտաճառի նիւթ ուսումնասիրել եւ մոդելաւորել է արեան գլուկոզայի մակարդակի ազդեցութիւնը մարդու հիւսւածքների վրայ՝ գլուկոզայի մակարդակը օպտիկալ ձեւով չափելու նպատակով: Ճարտարագէտի առաջին գիւտը եղել է երրորդ անձի ապահովագրութիւն չունեցող մոտորսիկլետների եւ ինքնաշարժերի երթեւեկութիւնը վերահսկող էլեկտրոնիկ համակարգի ստեղծումը, որը գրանցւել է Երկրի կալւածների եւ փաստաթղթերի գրանցման կազմակերպութեան կողմից՝ իրանական 1391 թւականին, 77640 գրանցման համարի ներքոյ:

Ռուբէնն ուսանողական տարիներին անհատական գիտաշխատութիւնների կողքին համագործակցել է մի շարք խմբական հետազօտական աշխատանքներում.

- Անգլիայի «Ֆորմուլա» մրցաշարին մասնակցող Սպահանի Արդիւնաբերական համալսարանի «Ֆորմուլ» անւամբ ինքնաշարժի հիմնական նախագծող խմբին մաս կազմելով՝ նախագծել եւ ծրագրաւորել է սոյն մեքենայի էլեկտրոնիկ համակարգը:

- Անդամակցելով Սպահանի Պետական եւ Սպահանի Արդիւնաբերական համալսարանների համատեղ հետազօտական խմբին, ակտիւ գործունէութիւն եւ դերակատարութիւն է ցուցաբերել ինսուլինի աւտոմատ սրսկման սարքի նախագծման եւ օպտիկալ ձեւով արեան գլուկոզայի մակարդակը ճշտող սարքի ստեղծման ծրագրում:

Ռուբէն Մինասեանը գիտական ասպարէզում յաջողութիւններ արձանագրելուց բացի՝ դեռ պատանի հասակից աշխոյժ գործունէութիւն է ծաւալել նախ «Թադէոս Թադէոսեան» պատանեկան, ապա «Ռուբէն» երիտասարդական միութիւններում: Նա անդամակցելով Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Ուսանողական միաւորին՝ մէկ շրջան ընտրւել է սոյն միաւորի վարչութեան անդամ: Ռուբէնը մէկ շրջան եղել է նաեւ Սպահանի հայոց թեմի Երիտասարդական խորհրդի անդամ:

Երիտասարդ ճարտարագէտ-գիւտարարը խոստովանում է, որ իր փայլուն յաջողութիւնների համար խորապէս երախտապարտ է իր ծնողներին, ովքեր ջանք չեն խնայել իր դաստիարակութեան, կրթութեան եւ առաջադիմութեան ուղղութեամբ:

ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹԵԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԻՆ

Ուրբաթ՝ օգոստոսի 14-ին, Սպահան քաղաքում կայացաւ մարմնամարզութեան (բադիբիլդինգ) մարզաձեւի Սպահան նահանգի առաջնութիւնը, որի արդիւնքում փայլուն յաջողութիւններ արձանագրեցին նոր-ջուղայեցի երկու մարզիկներ:

Մրցոյթի մեծահասակների բաժնի 65 կ.գ. քաշային կարգում, Էդուիկ Մարկոսեանը յաջողեց նւաճել ոսկէ մեդալ եւ նահանգի չեմպիոնի կոչումը, իսկ մրցոյթի վետերանական (վաստակաւորներ) բաժնում Նորուիկ Օհանեանը փոխչեմպիոն ճանաչւելով՝ արժանացաւ արծաթէ մեդալի:

Էդուիկ Մարկոսեանը ծնւել է 1983 թւականին եւ 15 տարեկան հասակից զբաղւել է այս մարզաձեւով, իսկ Նորուիկ Օհանեանը, որը ծնւել է 1974-ին, շուրջ 6 տարի է, ինչ զբաղւում է մարմնամարզութեամբ եւ 2014 թւականից սկսել է իր պրոֆեսիոնալ մարզումները: Նրանք իրենց վերապատրաստման պարապմունքներն անց են կացրել «Մասիս» մարմնամարզութեան սրահում՝ Ա կարգի մարզիչ Ռեզա Շահռիարի վերահսկողութեամբ:

Երկու մարզիկներն էլ թեւակոխելով յաջորդ փուլ՝ իրանական ընթացիկ տարւայ յաջորդ ամիսներին մասնակցելու են երկրի առաջնութեանը:

ՆԻՒԹԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ն.Ջ.Հայոց Առաքելական Եկեղեցեայ Վարչութեան

Ս. Գէորգ եկեղեցի

- 1,000,000-ական դրամ. Ռոզիկ Պօղոս-Ահմադաբադի, Մինաս Գէորգեան, Արէն Բաբումեան, Մագի Հայկունեան- Բոյաջեան՝ Էդնա Գրիգորեանի մահուան քառասունքի առթիւ, Զանէս Գրիգորեան՝ իր ծնողների՝ Սերոբ եւ Հռիփսիկ Գրիգորեանների յիշատակին, Աքռամ
- 500,000-ական դրամ. Մասիս Օրոջեան
- 300,000 դրամ. Յովիկ Ստեփանեան
- 200,000-ական դրամ. Սանդրա Խաչատրեան, Երան Խուդավերդեան
- 100,000 դրամ. Ժանէթ Այլազեան

Խաչի զոյգելու դիմաց

- 200,000 դրամ. Դաւթեան
- 100,000-ական դրամ. Փաթրիշիա Դաւթեան, Դանիէլ Կարապետեան

Ս. Աստուածածին եկեղեցի

- 500,000 դրամ. Քլօդէթ Յարութիւնեանից ի յիշատակ իր մօր՝ հանգուցեալ Ռօզիկ Թորաբեանի

Վարդիշող Խաժակեան-Ղազարեանի յիշատակին

- 600,000 դրամ. Քլար Խաշաքեան
- 300,000-ական դրամ. Ծաղկուշ Խուդավերդեան, Էդուին Յովսէփեան
- 200,000-ական դրամ. Ս. Մինաս եկեղեցու կանանց յանձնախումբ, Ասլան Սարեան, Վարդուշ Ղազարեան, Յակոբ Մարկոսեան
- 150,000 դրամ. Հայկազ Պետրոսեան
- 100,000-ական դրամ. Յովիկ Խուդավերդեան, Յարութ Բաղդասարեան, Ալբերտ Ղազարեան

Գայիանէ Թորոսեան-Դաւթեանի յիշատակին

- 500,000 դրամ. Աւօ եւ Թագուշ Բաշիկեաններ
- 200,000 դրամ. Միքայէլ Զոհրաբեան

Գայիանէ Յովսէփեան-Յակոբեանի յիշատակին

- 200,000 դրամ. Լուսիկ Յարութիւնեան
- 150,000-ական դրամ. Լուդուիկ Յովսէփեան, Մինաս Թահմազեան, Թորոսեան ընտանիք, Հրանուշ Յակոբեան
- 100,000-ական դրամ. Վարդանուշ Յովսէփեան, Սարօ Շահբազեան, Սարօ Շահմիրզայեան, Լուսիկ Միրզախանեան, Շուշիկ Փանոսեան

Երանուհի Բարդուղեանի յիշատակին

- 500,000-ական դրամ. Նոր Զուղայի Հայուհեաց Բարեգործական ընկերութիւն, Հայ Ուսում. Զհարմահալ Միութիւն
- 200,000-ական դրամ. Աշխէն Մկրտչեան, Ժորժ եւ Թելմա Հայրապետեաններ
- 100,000 դրամ. Վարուժ եւ Անժել Ղարախանեաններ

Արմիկ Աղանեանի յիշատակին

- 500,000-ական դրամ. Պարգեւ եւ Զարդիկ Բաբումեաններ, Վրէժ եւ Էմիկ Տէր Մարտիրոսեաններ
- 200,000-ական դրամ. Նժդեհ Տէր Մարտիրոսեան, Ժորժ եւ Թելմա Հայրապետեաններ, Նահապետ Մելիքեան, Արբի եւ Մելինէ Բաբումեաններ

Գոգալ Շիրուանեանի յիշատակին

- 500,000-ական դրամ. Փերիոյ Կրթասիրաց Միութիւն, Ռազմիկ Տէր-Գրիգորեան
- 150,000 դրամ. Գրիշ եւ Վարդուհի Քալանթար Օհանեաններ
- 100,000-ական դրամ. Սոնիկ Կիրակոսեան, Լորիկ Բաղդասարեան, Լալա Բաղդասարեան, Օդէթ Բաղդասարեան, Սթելա Դիլանչեան

Մուշեղ Ղարիբեանի յիշատակին

- 1,500,000 դրամ. Սուրէն Դիլանչեան
- 500,000-ական դրամ. Յարութ Յակոբեան, Վարուժ Ղարիբեան, Հրայր եւ Քարմէն Ղարիբեաններ
- 300,000-ական դրամ. Մասիս Դիլանչեան, Տիգրանուհի Ղեւեան, Յովսէփ Ղարիբեան, Վարուժ եւ Սթելա Վարդանեաններ, Ժիրայր եւ Մելինէ Ղարիբեաններ, Մասիս եւ Այդա Մինասքանեաններ, Վարդուշ Ղազարեան- Դիլանչեան, Սոնիա եւ Սեւան Դիլանչեաններ
- 250,000 դրամ. Գրիշ Դիլանչեան
- 240,000 դրամ. Վոլգա Ղարիբեան
- 200,000-ական դրամ. Կանանց հոգեւոր լսարան եւ Շուշանիկ երգչախումբ, Սթելա Ղարիբեան, Սիմիկ Ղարախանեան, Հրաչիկ Ղարիբեան, Յարութ եւ Հայկուշ Քեշիշեաններ, Մարօ Ղարիբեան- Բաղումեան, Անուշ Ղարիբեան, Հայկազ ու Հրանուշ Ղարիբեաններ, Ժորժ եւ Թելմա Հայրապետեաններ, Ռիմա Դիլանչեան, Աղաւնի Ղարիբեան, Ռազմիկ եւ Աստղիկ Դիլանչեաններ
- 150,000-ական դրամ. Մասիս Քեշիշեան, Սիլվարդ Թորոսեան, Խաչիկ Յովսէփեան
- 100,000-ական դրամ. Գառնիկ Հայրապետեան, Արտուշ եւ Ֆրիդա Ղարիբեաններ, Ժենիկ Յակոբեան, Սոնիկ Կիրակոսեան, Պօղոս եւ Վալենթին Ղարիբեաններ, Վարուժ եւ Անժել Ղարախանեաններ, Անդրանիկ եւ Անահիտ Յարութիւնեաններ
- 50,000 դրամ. Բաղդասար Դիլանչեան

Մասիս Մինասեանի յիշատակին

- 500,000-ական դրամ. Վիգէն եւ Յասմիկ Յարութիւնեաններ, Սուրէն Մինասեան
- 300,000 դրամ. Զաւէն Փանոսեան
- 200,000-ական դրամ. Հենրիկ Եղսանեան, Սերոժ եւ Պերճիկ Յովհաննիսեաններ, Բաղդասար Շահնազարեան, Վարդան Մինասեան, Համլետ Մինասեան
- 100,000-ական դրամ. Աւուկ եւ Սանդրա Խուդաբախշեաններ, Մարօ Ղարիբեան, Ալբերտ Թահմազեան, Հրաչ եւ Սաթօ Սիմոնեաններ

Վանուշ Տէր Յովհաննիսեան-Հայրապետեանի յիշատակին

- 5,000,000 դրամ. Հմայեակ Նաւասարդեան
- 2,000,000 դրամ. Հենրիկ եւ Էլիզ Մովսիսեաններ
- 1,000,000 դրամ. Սերոժ եւ Մարօ Տէր Յովհաննիսեաններ
- 500,000 դրամ. Վարուժ Ղարախանեան
- 300,000 դրամ. Վարուժ եւ Սթելա Վարդանեաններ
- 200,000-ական դրամ. Երուանդ Պօղոսեան, Ռիմա Դիլանչեան, Հայկ Հայրապետեան

Հանգուցեալ Ստեփան Ղազարեանի յիշատակին

- 600,000 դրամ. Արաքս եւ Քլար Խաշաքեաններ
- 300,000 դրամ. Յակոբ Մարկոսեան
- 150,000 դրամ.Ասլան Սարեան

Հայկանուշ Ուղուրեան-Սէթաղայեանի յիշատակին

- 500,000 դրամ. Ն.Ջ. Հայուհեաց բարեգործական ընկերութիւն

Սպահանի հայոց թեմի Կրթական խորհուրդ

- 15,000,000 դրամ. Անուշաւան Կիրակոսեան՝ իր մօր՝ Գոգալ Շիրուանեան-Կիրակոսեանի յիշատակին

Ծանր հիւանդների օժանդակութեան ֆոնդ

- 20,000,000 դրամ. Յաւերժիկ Կարապետեան՝ իր ամուսնու՝ Հայրիկ (Աւագ) Կարապետեանի յիշատակին
- 15,000,000 դրամ. զաւակներ՝ Հայրիկ (Աւագ) Կարապետեանի յիշատակին
- 1,000,000-ական դրամ. Ն.Ջ. Հայոց ազգ. «Քանանեան» դպրոց՝ հանգուցեալ Էլիրա Ղազարեանի յիշատակին, Մուկուչ Զհարմահալի՝ Հայրիկ (Աւագ) Կարապետեանի յիշատակին

Ն. Զ. Հայուհեայ բարեգործական ընկերութիւն

- 5,000,000 դրամ. Ազնիւ Կիրակոսեան՝ իր մօր՝ Գեղազ Շիրուանեանի յիշատակին
- 3,000,000 դրամ. Ծաղկուշ Համբարչեան
- 1,500,000 դրամ. Ռուբէն եւ Անի Գրիգոր-Խաչիկեան
- 1,400,000 դրամ. Մի խումբ երիտասարդուհիներ
- 1,000,000 դրամ. Յասմիկ Դաւթեան՝ իր ամուսնու՝ Ռուբէն Դաւթեանի յիշատակին
- 500,000 դրամ. Արաքս Պօղոսեան՝ Երան Բարդուղեանի յիշատակին

Մայրերի օրւայ առթիւ

- 3,000,000 դրամ. Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհուրդ
- 1,000,000 դրամ. Հայ դատի յանձնախումբ
- 500,000-ական դրամ. Ն.Զ. Հայ կանանց գթութեան միութիւն, Օդեթ Բաղդասարեան, Մագի Հայկունեան,
- 300,000-ական դրամ. Փերիոյ կրթ. միութիւն, Հայ ուս. Զհարմահալ միութիւն
- 200,000-ական դրամ. Ն.Զ. Հայոց ազգային կրթահամալիր, Վանէ Թահմազեան, Վեհանուշ Խուդաբախշեան, Նարեգա Սիմոնեան,Վազրիկ եւ Քառոլին Վարդանեաններ

Քառասուն մանկանց տօնի առթիւ

- 400,000 դրամ. Երան Բարդուղեան
- 300,000 դրամ. Մագի Հայկունեան
- 100,000-ական դրամ. Սոնիկ Կիրակոսեան, Արմինէ Խաչիկեան, Անահիտ Յարութիւնեան

Ն.Զ. Հայ կանանց գթութեան միութիւն

Ազգային Ծերանոց

- 2,000,000 դրամ. Վահէ
- 1,310,000 դրամ. ոմն
- 1,000,000-ական դրամ. Ծաղկուշ Համբարչեան, Արամազդ Խաչեան, Քառոլին եւ Վարոս Խուդավերդեաններ
- 850,000 դրամ. Արազ Մարտիրոսեան
- 640,000 դրամ. ոմն
- 500,000-ական դրամ. Տիգրանուհի Ղեւեան, Մագի Հայկունեան՝ Էդնա Տէր-Գրիգորեանի յիշատակին, Սոնիա եւ Արմոնդ Փանոսեաններ՝ Ժուլիեթ Լալազարեանի յիշատակին, Բանիթաբա,«Դանլի» ընկերութիւն՝ Երանուհի Բարդուղեանի յիշատակին, Անժել Անդրիասեան՝ Կարապետ եւ Մարգարիտ Անդրիասեանների յիշատակին, Օւսան Ղարախանեան՝ իր եղբօր՝ Սամուէլ Ղարախանեանի յիշատակին, Եղսօ Ներսիսեան, Այդա Մարկոսեան
- 350,000-ական դրամ. Ժուլիեթ Սէթ-Աղայեան
- 300,000-ական դրամ. Նւարդ Խաչեան, Տիգրանուհի Ղեւեան, Ժանեթ Խաչատրեան
- 220,000-ական դրամ. Էլիզ Մարտիրոսեան, Սոֆիկ Պօղոսեան
- 200,000 դրամ. Յարութ Քեշիշեան
- Սեղանի ծածկոցներ. Արաքս Բարսեղեան
- Սենդամթերք. Հայոց ազգային «Կատարինեան» դպրոց, Հայոց ազգային «Արմէն» կրթահամալիր, Հայոց ազգային «Քանանեան» դպրոց, «Շուշանիկ» երգչախումբ, Ժանեթ Խուդավերդեան, Լուսնթագ Ասատրեան, Շուշան եւ Թագուհի, Անահիտ Մարտիրոսեան, Արուսիկ Շահբազեան, Ժանեթ Ալեքսանդրեան, Արաքս Թահմազեան, Լորեթա Գալստեան, ծաղիկներ Հայկուշ Ծատրեան, Աննիկ եւ Արեգնազ Տէր-Աւանիսեաններ, Սոնա Թումաթարեան, Սուլթան Թորոսեան, Նարինջ Ղազարեան, Արմինէ Կարապետեան՝ գործընկերուհիներով, Վարդան եւ Վոլգա Յակոբեան, Ժենիկ Յակոբեան, Սամսոն Զարգարեան, Արաքս Թահմազեան, Հայուհի Ղարախանեան, Վերժիկ եւ Արմինէ Թորոսեաններ, Հելեն Զեդուշեան եւ Փաօլա Սախարեան՝ մայրերի օրւայ առիթով՝ Նազիկ Իսախանեանի յիշատակին, Ժանօ Ալեքսանդրեան՝ մայրերի տօնի առթիւ՝ Նազիկ Իսախանեանի յիշատակին, Վալերիկ Ղարախանեան՝ Հրանդ Յովհաննիսեանի տարելիցի առթիւ, Ժենիկ Տէր-Գրիգորեան՝ հոգեճաշ՝ Էդնա Տէր-Գրիգորեանի յիշատակին, ոմն

Հայ ուս. Զհարմահալ միութեան Ն.Զ. մասնաճիւղ

- 500,000-ական դրամ. Երանուհի Բարդուղեան, Հռիփսիկ Այւազեան, Ովսաննա Ղարախանեան
- 300,000 դրամ. Էմիկ Բալեան
- 100,000 դրամ. Աննիկ Ալէքսանդրեան

Փերիոյ կրթ. միութիւն

- 5,000,000 դրամ. Ազնիւ Կիրակոսեան՝ իր մօր՝ Գոզալ Շիրուանեան-Կիրկոսեանի յիշատակին

Շահինշահիրի Հայ Համայնքի Վարչութիւն

Հայոց դպրոց

- 500,000-ական դրամ. Նարեկ եւ Նայիրի Հախնազարեաններ
- Անվճար նորգութիւն Հայոց դպրոցի ջրազովացուցիչ սարքի (1,200,000 դրամ արժողութեամբ). Յունան Դեհբաշեան

Հ.Հ. անկախութեան 97-ամեակի տօնակատարութիւն

- 10,000,000-ական դրամ. Սպահանի հայոց թեմի Թեմական խորհուրդ

Վերափոխումն Ս. Աստուածածնի տօնի առթիւ

- 100,000-ական դրամ. Սոնիկ Յակոբեան, Սեդա Բաբումեան, Մագի Յարութիւնեան, Լուսիկ Միրզախանեան
- 150,000 դրամ. Պրն. Մատթէոս Շահբազեան
- 200,000-ական դրամ. Մառինա Շահմիրզայեան, Շարբաթ Խուդավերդեան, Յովհաննէս Խուդավերդեան, Հրաչիկ Ալեքսանդրեան
- 500,000 դրամ. Յովհաննէս Թահմազեան եւ Հայկանուշ Ադամեան
- 1,000,000 դրամ. Յովսէփ եւ Բաֆֆի Փուլադեաններ

Առաջնորդարանին եւ ազգային կառոյցին առնչւող լուրերն ու թղթակցութիւնները պատրաստում է Ազգային Առաջնորդարանի Հանրային Կապի գրասենեակը, համայնքային եւ կրօնական արարողութիւններին վերաբերող լուրերը՝ «Ալիք»-ի թղթակիցները, «Արարատ» Միութեան առնչւող լուրերը՝ օրդ. Երանուշ Թահմազեանը, իսկ Շահինշահրի հայ համայնքին վերաբերող տեղեկութիւնները՝ տկն. Վիոլետ Յարութիւնեանը։

Որոշ ծրագրերի լուսանկարները տրամադրում է պրն. Գեւիկ Խաչատրեանը։

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

خلیفه گری ارامنه اصفهان و جنوب ایران

صندوق پستی ۸۱۷۳۵/۱۱۵

Armenian Cathedral - P.O.Box 81735-115
New - Julfa, Isfahan, Iran
WWW.Norjugha.ir
WWW.Vank.ir
E-mail: Sourbv@Yahoo.com
Tel: +98–31–36243471-2
Fax: +98–31–36270999

1915 ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ